ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 20.03.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-08/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2016թ. թիվ 1/73-1/2092-16 և 06.02.2017թ. թիվ 03/73-3/1639-17 գրություններով ներկայացված «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-08/17 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-08/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 15.03.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 21.01.2016թ. թիվ 01/61-713 գրության հիման վրա, 25.01.2016թ. թիվ 1/73-1/2092-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում՝ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 19.12.2016թ. թիվ 01/04.1/4615-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2016թ. թիվ 1/73-1/2092-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով արձանագրվել է, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 06.02.2017թ. թիվ 03/73-3/1639-17 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 124-րդ կետի 2-րդ ենթակետը, անհրաժեշտ է նախաձեռնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 27.01.2016թ. թիվ 01/04.1/180-16 գրությամբ դիմել է «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ին, որին պատասխան՝ Ընկերությունը 09.02.2016թ. թիվ 01 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 16.06.2015թ. կնքված «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-15/25» ծածկագրով պայմանագրով (այսուհետ նաև՝ Պայմանագիր)

Ընկերությունը ստանձնել է Երևանի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի՝ Էրեբունի հնավայրի վերակառուցման, արդիականացման, այցելուների սպասարկման, բարելավման ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության աշխատանքների պարտավորությունը:

Ընկերությունը 24.06.2015թ. թիվ 02 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանի Մշակույթի և տուրիզմի վարչությանը՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան մուտք գործելու, գեոդեզիական հանույթ և երկրաբանական ու հնագիտական հետախուզական պեղումներ և այլ չափագրական աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ թույլտվությունը, ինչպես նաև «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի անշարժ գույքի վկայականը ստանալու համար: Ընկերությունը խնդրել է Պատվիրատուին տրամադրել նաև նախագծվող կառույցների տեղակայման համար հաշվարկային հզորությունները և տարողունակությունները:

Չստանալով գրավոր և բանավոր պատասխան, ինչպես նաև ժամանակի սղության պատճառով նույն բովանդակությամբ գրությամբ՝ Ընկերությունը 15.07.2015թ. դիմել է նաև Երևանի քաղաքապետին:

Ընկերությունը 09.07.2015թ. թիվ 04 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանի մշակույթի և տուրիզմի վարչություն՝ ներկայացնելով Ընկերության կողմից կազմված էսքիզ նախագիծը, որը ներառում էր իր մեջ նախատեսվող ամֆիթատրոնի, ուրարտական խոհանոցի, ավտոկայանատեղիի սպասարկման և այլ շինությունների տեղակայման և դրանց հաշվարկային հզորությունները (տարողունակությունները), հնագիտական հետախուզման հատվածները, նոր կառուցվող ցանկապատի, մուտքի դարպասի ճանապարհների և հենապատերի ճարտարապետական լուծումները: Միևնույն դիմումով Ընկերությունը խնդրել է էսքիզը ներկայացնել ՀՀ մշակույթի նախարարություն քննարկման և ստանալ թույլտվություն՝ հնավայրի հնագիտական դիագնոստիկ պեղումները, երկրաբանական հետազոտությունները իրականացնելու համար:

Նշված էսքիզ նախագիծը չի դրվել գիտամեթոդական քննարկմանը, այլ միայն ստացվել է 18.07.2015թ. թիվ 13/839 գրությունը, որի համաձայն՝ ներկայացված նախագիծը առաջադրանքին չի համապատասխանում և տրված է մեկ անձի որոշման հիման վրա, այսինքն՝ ըստ թանգարանի տնօրենի կարծիքի:

Ի պատասխան Ընկերության 15.07.2015թ. գրությանը՝ ստացվել է 24.07.2015թ. թիվ 13/37299 գրությունը, որտեղ ասվում է, որ «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ն «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տարածք մուտք գործելու և աշխատանքներ իրականացնելու թույլտվությունը կարող է ստանալ տեղում; իսկ անշարժ գույքի վկայականի պատրաստումն ընթացքի մեջ է: Հարց է առաջանում, թե ինչպես պետք է հասկանալ տեղում թույլտվություն ստանալը՝ առանց ՀՀ մշակույթի նախարարության թույտվության:

Ընկերությունը 19.08.2015թ. թիվ 08 գրությամբ կրկին դիմել է Երևանի քաղաքապետին և ներկայացրել ստեղծված իրավիճակը: Ընկերությունը ներկայացրել է, որ առանց սեփականության վկայականի կամ գլխավոր հատակագծի, առանց սահմանների ծրագծի հստակեցման հնարավոր չէ նախագծել կամ գեոդեզիական հանույթ ներկայացնել, ներկայացված էսքիզ նախագիծը համատեղ քննարկել, ապա այն ներկայացնել ՀՀ մշակույթի նախարարություն: Ընկերությունը դիմում-նամակի մեջ նշել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների վերջնաժամկետը 15.09.2015թ. և խնդրել է, որպեսզի աշխատանքների ավարտը երկարաձգվի Պայմանագրի 7.6 կետի համաձայն, որպեսզի այդ ընթացքում Ընկերությունը ստանա համապատասխան փաստաթղթերը և ՀՀ մշակույթի նախարարության համապատասխան պատասխանը, սակայն համագործակցություն ընդհանրապես չի եղել:

Ժամկետի սղության պատճառով՝ Ընկերությունը ինքն է դիմել ՀՀ մշակույթի նախարարությանը:

Ընկերությունը 14.08.2015թ. թիվ 07 գրությամբ դիմել է ՀՀ մշակույթի նախարարությանը և ներկայացրել արգելոց-թանգարանի սահմաններում առաջադրանքով նախատեսված օբյեկտների կառուցապատման, տեղաբախշման առաջարկը, որոնց հողամասերում անհրաժեշտ է իրականացնել հնագիտական և երկրաբանական հետախուզման աշխատանքները՝ խնդրելով տալ մասնագիտական եզրակացություն

առաջարկի վերաբերյալ և հնագիտական ու երկրաբանական հետախուզում իրականացնելու թույլտվություն:

Ի պատասխան Ընկերության 19.08.2015թ. գրությանը՝ 08.09.2015թ. ստացվել է Երևանի քաղաքապետարանի թիվ 13/44200Հ գրությունը, համաձայն որի արգելոց-թանգարանը չունի անշարժ գույքի վկայական և դրա տրամադրումը պայմանագրով չի նախատեսվում և կից ներկայացվել է պատմամշակութային հուշարձանների պահպանման գոտիների լուսապատկերը, որից սակայն հնարավոր չէ հասկանալ թանգարանի սահմանների ծրագիծը:

Միևնույն ժամանակ նշված գրությամբ Ընկերությունից պահանջվել է նախատեսվող կառույցների էսքիզային նախագծերը, որոնքը պայմանագրի Հավելված 1 նախագծային առաջադրանքով նախատեսված չեն:

ՀՀ մշակույթի նախարարությունը 28.09.2015թ. թիվ 01/14-1/5048-15 գրությամբ հայտնել է, որ ցանկապատի ծրագծի որոշման համար անհրաժեշտ է ներկայացնել սեփականության վկայական կամ հողամասի գլխավոր հատակագիծ:

Ինչպես նաև վերոհիշյալ գրությամբ ՀՀ մշակույթի նախարարությունը հայտնել է, որ դեռևս 2014թ. վերջինս Երևանի քաղաքապետարանին առաջարկել է ստեղծել մասնագիտական հանձնախումբ: Ուստի և Ընկերության կողմից ներկայացված հուշարձանի (պորտիկի) տեխնիկական վիճակի վերաբերյալ ակտը և նախագծային առաջադրանքը նախարարությունը կքննարկի վերոհիշյալ հանձնախմբի եզրակացությունը ստանալուց հետո:

Այսպիսով՝ համագործակցության բացակայության պայմաններում Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքները հնարավոր չի եղել կատարել:

«ԹԱՀԳ ԳՐԻԳ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 13.02.2017թ. ժամը 15:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-08/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, որոնք պնդել են, որ Ընկերության կողմից Պայմանագիրը կատարելու անհնարինությունը պայմանա-վորված է եղել հենց Պատվիրատուի գործողություններով, քանի որ վերջինիս կողմից չեն տրամադրվել աշխատանքները սկսելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

3. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>**

Երևանի քաղաքապետարանը 21.01.2016թ. թիվ 01/61-713 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ի միջև 16.06.2015թ. կնքված «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-15/25» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը ստանձնել է Երևան քաղաքի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի՝ Էրեբունի հնավայրի վերակառուցման արդիականացման, այցելուների սպասարկման բարելավման ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, որի կատարման վերջնաժամկետը սահմանված էր 15.09.2015թ.:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է նույն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

Երևանի քաղաքապետարանը Ընկերությանը տեղեկացրել էր, որ անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան բացատրություններ՝ մինչ օրս պայմանագրային պարտավորությունները չսկսելու վերաբերյալ, ինչպես նաև ձեռնարկել միջոցներ պայմանագրային պարտավորությունների կատարման ուղղությամբ:

Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու հիմքում դրված հանգամանքների և հարցադրումների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանը պատասխանել է 08.06.2015թ. թիվ 13/44200h գրությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել նույն Պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է նույն Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) խախտել է աշխատանքների կատարման ժամկետը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 5.3 կետի համաձայն՝ նույն Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 տոկոսի չափով:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ առաջարկել է սեղմ ժամկետներում վճարել վերը նշված կետով առաջացած տույժի գումարը:

Երևանի քաղաքապետարանը 24.01.2017թ. թիվ 03/61-2246Հ գրությամբ հայտնել նաև, որ Պատվիրատուն Ընկերությանը համապատասխան գրությամբ տեղեկացրել էր, որ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց թանգարանը չունի անշարժ գույքի պետական գրանցման վկայական, որի տրամադրումը նախատեսված չէ Պայմանագրով:

Միաժամանակ Պայմանագրով սահմանված գեոդեզիական հանույթի իրականացման նպատակով Ընկերությանը տրամադրվել է Երևանի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման գոտիների նախագծի համապատասխան հատվածի լուսապատճենը, որում սահմանված է պահպանման գոտիների համակարգը, իսկ հնավայր տանող ճանապարհի երկայնքով էլեկտրական լուսավորություն իրականացնելու տեխնիկական պայմանները կարող են տրամադրվել ներկայացված 15 կվտ-ի հաշվարկ-հիմնավորումները ներկայացնելու պարագայում:

Ընկերությունը, փաստացի ծանոթանալով հրավերով սահմանված պայմաններին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված ժամկետում չի պահանջել համապատասխան պարզաբանում նախագծային առաջադրանքում նշված աշխատանք-ների բացակայող ծավալների վերաբերյալ:

Երևանի քաղաքապետարանը Ընկերությանը տեղեկացրել է, որ հաշվարկային հզորությունները հնարավոր կլինի քննարկել Պայմանագրի հավելված 1-ով սահմանված հնագիտական դիագնոստիկ պեղումներ և երկրաբանական հետազոտություններ իրականացնելու և արդյունքներն աշխատանքային կամ էսքիզային նախագծով ներկայացնելու պարագայում, իսկ Ընկերության կողմից ներկայացված էսքիզ-նախագծում բացակայում են նախատեսվող կառույցների էսքիզային տարբերակները, որի փոխարեն ներկայացված էր թանգարանի մակերեսի գծագիր պատկերը:

Վերը նշվածի հիման վրա Ընկերությունը տեղեկացվել է, որ պեղումների և երկրաբանական հետազոտությունների համար թույլտվություն ստանալու նպատակով անհրաժեշտ է էսքիզային տարբերակով հիմնավորել և ներկայացնել նախատեսվող պեղումների իրականացման տարածքներն ու մակերեսը: Էսքիզ-նախագծով ներկայացված պեղումների մակերեսն անհրաժեշտ է առաջարկել ոչ թե կամայական սկզբունքով, այլ առաջնորդվելով ՀՀ կառավարության 20.04.2002թ. թիվ 438 որոշմամբ ամրագրված դրույթներով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 13.02.2017թ. ժամը 15:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-13/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԳԲԽ-08/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 15.03.2017թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2016թ. թիվ 1/73-1/2092-16 և 06.02.2017թ. թիվ 03/73-3/1639-17 գրություններով ներկայացված «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00857439) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, ուստի առաջարկում ենք Ընկերությանը Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը մերժել:

5. **<u>ՍՑ-ԳԲԽ-08/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2016թ. թիվ 1/73-1/2092-16 և 06.02.2017թ. թիվ 03/73-3/1639-17 գրություններով ներկայացված «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի և «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ի միջև 16.06.2015թ. կնքվել է «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-15/25» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագիրը:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ Ընկերությունը) ստանձնում է Երևան քաղաքի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի՝ Էրեբունի հնավայրի վերակառուցման արդիականացման այցելուների սպասարկման բարելավման ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ նաև՝ Աշխատանք)՝ համաձայն նույն պայմանագրի

անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

3. Պայմանագրի գնման ժամանակացույցով աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանվել է Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ 15.09.2015թ:

4. Ընկերությունը Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսելու և իրականացնելու համար մի շարք գրություններով Երևանի քաղաքապետարանին խնդրել է տրամադրել՝

- Էրեբունի» պատմահնագիտական արգելով թանգարանի տարածք մուտք գործելու և տեղում գեոդեզիական հանույթ, երկրաբանական ու հնագիտական պեղումների հետախուզման և այլ չափագրական աշխատանքներ իրականացնելու թույլտվություն:
- «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի անշարժ գույքի վկայական,
- կառուցապատման նախագծի մշակման՝ նախատեսվող ամֆիթատրոնի, ուրարտական խոհանոցի, ավտոկայանատեղիի և այլ սպասարկման շինությունների տեղակայման համար՝ դրանց հաշվարկային հզորությունները (տարողունակություն-ները),
- հնավայր տանող ճանապարհի երկայնքով էլեկտրական լուսավորություն իրականացնելու համար՝ տեխնիկական պայմանները:

5. Երևանի քաղաքապետարանը 24.07.2015թ. թիվ 13/37299 գրությամբ հայտնել է, որ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի անշարժ գույքի վկայականի պատրաստումն ընթացքի մեջ է, իսկ 08.09.2015թ. թիվ 13/44200Հ գրությամբ հայտնել է, որ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը չունի անշարժ գույքի պետական գրանցման վկայական և դրա տրամադրումը նախատեսված չէ Պայմանագրով:

6. Երևանի քաղաքապետարանը 24.07.2015թ. թիվ 13/37299 գրությամբ հայտնել է, որ «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ն «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տարածք մուտք գործելու և աշխատանքներ իրականացնելու թույլտվությունը կարող է ստանալ տեղում:

7. Ընկերությունը 14.08.2015թ. N 07 գրությամբ ՀՀ մշակույթի նախարարությանն ներկայացրել է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի սահմաննե-րում Պայմանագրով նախատեսված օբյեկտների կառուցապատման տեղաբաշխման

առաջարկը, որոնց հողամասերում անհրաժեշտ է իրականացնել հնագիտական և երկրաբանական հետախուզման աշխատանքները:

Ընկերությունը նշված գրությամբ ՀՀ մշակույթի նախարարությանը խնդրել է տրամադրել մասնագիտական եզրակացություն առաջարկի վերաբերյալ և տալ հնավայրի հնագիտական և երկրաբանական հետախուզում իրականացնելու թույլտվությունը:

8. ՀՀ մշակույթի նախարարությունը 28.09.2015թ. թիվ 01/14-1/5048-15 գրությամբ հայտնել է, որ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Էրեբունի հնավայրի տարածքում գտնվող պորտիկի վերականգնման՝ խնդրի, ինչպես նաև կառուցապատման համար նախատեսվող տարածքներում հնագիտական և երկրաբանական հետախուզման աշխատանքների թույլտություն տալու վերաբերյալ նախարարությունում խնդիրների քննարկման համար անհրաժեշտ է ներկայացնել համալիր ծրագիր, որում պետք է հիմնավորվի նախատեսվող կառույցների նպատակն ու անհրաժեշտությունը, ինչպես նաև շինությունների և ավտոկայանատեղիի հզորությունները:

ՀՀ մշակույթի նախարարությունը նշված գրությամբ հայտնել է նաև, որ նախատեսվող օբյեկտների նախագծային առաջադրանքը պետք է լրացվի ՀՀ կառավարության կողմից հաստատված ձևաչափով, իսկ ցանկապատի ծրագծի որոշման համար անհրաժեշտ է ***ներկայացնել սեփականության վկայական կամ հողամասի գլխավոր հատակագիծ***:

ՀՀ մշակույթի նախարարությունն Ընկերությանը տեղեկացրել է, որ Էրեբունու պատմահնագիտական հուշարձանների նորոգման և վերականգնման խնդիրների բացահայտման ու կարգավորման համար ՀՀ մշակույթի նախարարությունը դեռևս 2014թ. Երևանի քաղաքապետարանի առաջարկել է ստեղծել մասնագիտական հանձնախումբ, ուստի Ընկերության կողմից ներկայացված հուշարձանի (պորտիկի) տեխնիկական վիճակի վերաբերյալ ակտը և նախագծային առաջարկը նախարարությունը կքննարկի վերոնշյալ հանձնախմբի եզրակացությունը տալուց հետո:

9. Երևանի քաղաքապետարանը 23.10.2015թ. թիվ 13/888h գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանված է նույն թվականի սեպտեմբերի 15-ը, ուստի անհրաժեշտ է

երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել (հանձնել) Պայմանագրով նախատեսված աշխատանքները, հակառակ դեպքում Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի կլուծարվի:

10. Երևանի քաղաքապետարանը 13.11.2015թ. թիվ 61/2857-1 գրությամբ ծանուցել է Ընկերությանը՝ հայտնելով, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը, Պատվիրատուն միակողմանի լուծարում է Պայմանագիրը:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի 21.01.2016թ. թիվ 01/61-713 և 24.01.2017թ. թիվ 03/61-2246Հ գրությունները և կից փաստաթղթերը, ՀՀ մշակույթի նախարարության 28.09.2015թ. թիվ 01/14-1/5048-15 գրությունը, հայտնում է հետևյալը.

ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հողամասի սահմաններն ամրագրվում են կադաստրային քարտեզներում, սեփականության, օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերում և արտացոլվում են տեղանքում:

Նույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հողամասը տրամադրելու համար՝ մինչև այն տրամադրելու մասին որոշում ընդունելը, հողամասի սահմանները տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախապես որոշվում են տեղանքում և քարտեզի վրա: Պետական կամ համայնքային սեփականության հողերի օտարման կամ օգտագործման տրամադրման դեպքում համայնքների վարչական սահմաններում գտնվող հողամասերի հատակագծերը հաստատում են համայնքների ղեկավարները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Նույն օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար

պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 422-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պարտատերը կետանցող է համարվում, եթե նա հրաժարվել է պարտապանի առաջարկած պատշաճ կատարումն ընդունելուց կամ չի կատարել օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով սահմանված կամ գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից բխող գործողություններ, որոնք չկատարելու դեպքում պարտապանը չէր կարող կատարել իր պարտավորությունը:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հուշարձանների հետախուզում և հնագիտական պեղումներ կատարելու թույլտվություն տալիս է լիազորված մարմինը՝ միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն***, ***որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Երևանի քաղաքապետարանի և «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ի միջև 16.06.2015թ. կնքված «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-15/25» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ

դեպքում՝ Ընկերությունը) ստանձնում է Երևան քաղաքի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի՝ Էրեբունի հնավայրի վերակառուցման արդիականացման այցելուների սպասարկման բարելավման ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է նույն Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետնե-րում:

Պայմանագրի գնման ժամանակացույցով աշխատանքների տևողությունը սահմանվել է Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15.09.2015թ.:

«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ն 24.06.2015թ. N 02 գրությամբ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնող Երևանի քաղաքապետա-րանի Մշակույթի և տուրիզմի վարչությանը հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքները իրականացնելու համար անհրաժեշտ է տրամադրել «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տարածք մուտք գործելու և տեղում գեոդեզիական հանույթ, երկրաբանական ու հնագիտական պեղումների հետախուզման և այլ չափագրական աշխատանքներ իրականացնելու թույլտվություն:

Նախագծային փաստաթղթերի օրենքով սահմանված կարգով թողարկման և փորձաքննության եզրակացություն տալու, ինչպես նաև վերոհիշյալ տարածքների մակերեսներն որոշելու համար Ընկերությունը Երևանի քաղաքապետարանի Մշակույթի և տուրիզմի վարչությանը (այսուհետ նաև՝ Վարչություն) խնդրել է տրամադրել՝

- «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի անշարժ գույքի վկայական,
- կառուցապատման նախագծի մշակման՝ նախատեսվող ամֆիթատրոնի, ուրարտական խոհանոցի, ավտոկայանատեղիի և այլ սպասարկման շինությունների տեղակայման համար՝ դրանց հաշվարկային հզորությունները (տարողունակություն-ները),

- հնավայր տանող ճանապարհի երկայնքով էլեկտրական լուսավորություն իրականացնելու համար՝ տեխնիկական պայմանները:

Ընկերությունը 09.07.2015թ. N 04 գրությամբ սահմանված կարգով աշխատանքներին ընթացք տալու համար Վարչության քննարկմանն է ներկայացրել էսքիզ-նախագիծը, որը ներառել է նախատեսվող ամֆիթատրոնի, ուրարտական խոհանոցի, ավտոկայանատեղիի, սպասարկման և այլ շինությունների տեղակայման և դրանց հաշվարկային հզորությունները (տարողունակությունները), հնագիտական հետախուզման հատվածները, նոր կառուցվող ցանկապատի, մուտքի դարպասի, ճաապարհների, հենապատերի ճարտարապետական լուծումները:

Նշված գրությամբ Ընկերությունը Վարչությանը խնդրել է էսքիզ-նախագիծը ներկայացնել ՀՀ մշակույթի նախարարության քննարկմանը՝ հնավայրի հնագիտական դիագնոստիկ պեղումները, երկրաբանական հետազոտությունները իրականացնելու թույլտվություն ստանալու համար:

Ի պատասխան «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ի վերոհիշյալ գրությանը՝ Երևանի քաղաքապետա-րանը 18.07.2015թ. թիվ 13/839 գրությամբ հայտնել է, որ ներկայացված «Նախագծի» տարբերակը չի ներառում հաստատված նախագծային առաջադրանքին համապատասխան դրույթների պահանջները, ինչը հնարավորություն չի տալիս քննարկման և առաջարկների ներկայացման:

Ընկերությունը Երևանի քաղաքապետարանին ուղղված 15.07.2015թ. գրությամբ հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքները իրականացնելու համար անհրաժեշտ է տրամադրել «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տարածք մուտք գործելու և տեղում գեոդեզիական երկրաբանական ու հնագիտական պեղումների հետախուզման և այլ չափագրական աշխատանքներ իրականցնելու թույլտվություն:

Նախագծային փաստաթղթերի օրենքով սահմանված կարգով թողարկման և փորձաքննության եզրակացություն տալու, ինչպես նաև վերոնշյալ տարածքների մակերեսները որոշելու Ընկերությունը խնդրել է տրամադրել՝

- «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված սեփականության իրավունքի

վերաբերյալ վկայականի պատճեն, ոչ բնակելի տարածքների անհատույց հողօգտագործման պայմանագրի և կամ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և համայնքային մարմինների հետ կնքված պայմանագրի պատճեն:

- Կառուցապատման նախագծի մշակման՝ նախատեսվող ամֆիթատրոնի, ուրարտական խոհանոցի, ավտոկայանատեղիի, սպասարկման և այլ շինությունների տեղադրման համար՝ դրանց հաշվարկային հզորությունները (տարողունակությունները):

Ի պատասխան «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ի վերոհիշյալ գրության՝ Երևանի քաղաքապետա-րանը 24.07.2015թ. թիվ 13/37299 գրությամբ հայտնել է, որ «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ն «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տարածք մուտք գործելու և աշխատանքներ իրականացվելու թույլտվությունը կարող է ստանալ տեղում, իսկ անշարժ գույքի վկայականի պատրաստումն ընթացքի մեջ է:

Միաժամանակ ուրարտական խոհանոցի, ամֆիթատրոնի, ավտոկայանատեղիի և այլ սպասարկման շինությունների տեղակայման հաշվարկային հզորությունները հստակեցնելու համար անհրաժեշտ է ներկայացնել նախագծային առաջադրանքին համապատասխան նախագիծ-առաջարկ, որը հնարավություն կտա իրականացնելու լրացուցիչ համատեղ քննարկումներ:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը 15.07.2015թ. 01/40 գրությամբ Երևանի քաղաքապետարանին հայտնել է, որ Պայմանագրի դրույթների համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված Էրեբունի հնավայրի վերականգնման, արդիականացման էսքիզային «նախագծի» տարբերակը, ըստ էության համր է, ոչինչ չասող, ուստի պետք է լինի հաստատված նախագծային առաջադրանքին համապատասխան նախագիծ-առաջարկ, որը հնարավորություն կտա քննարկելու և առաջարկներ անելու:

Ընկերությունը 14.08.2015թ. N 07 գրությամբ ՀՀ մշակույթի նախարարությանն ներկայացրել է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի սահմաննե-ում Պայմանագրով նախատեսված օբյեկտների կառուցապատման տեղաբաշխման առաջարկը, որոնց հողամասերում անհրաժեշտ է իրականացնել հնագիտական և երկրաբանական հետախուզման աշխատանքները:

Ընկերությունը նշված գրությամբ ՀՀ մշակույթի նախարարությանը խնդրել է տրամադրել մասնագիտական եզրակացություն առաջարկի վերաբերյալ և տալ հնավայրի հնագիտական և երկրաբանական հետախուզում իրականացնելու թույլտվությունը:

Ի պատասխան Ընկերության վերոհիշյալ գրության՝ ՀՀ մշակույթի նախարարությունը 28.09.2015թ. թիվ 01/14-1/5048-15 գրությամբ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Էրեբունի հնավայրի տարածքում գտնվող պորտիկի վերականգնման խնդրի, ինչպես նաև կառուցապատման համար նախատեսվող տարածքներում հնագիտական և երկրաբանական հետախուզման աշխատանքների թույլտություն տալու վերաբերյալ հայտնել է, որ ***նախարարությունում խնդիրների քննարկման համար անհրաժեշտ է ներկայացնել համալիր ծրագիր, որում պետք է հիմնավորվի նախատեսվող կառույցների նպատակն ու անհրաժեշտությունը, ինչպես նաև շինությունների և ավտոկայանատեղիի հզորությունները:***

ՀՀ մշակույթի նախարարությունը նշված գրությամբ հայտնել է նաև, որ նախատեսվող օբյեկտների նախագծային առաջադրանքը պետք է լրացվի ՀՀ կառավարության կողմից հաստատված ձևաչափով, ***իսկ ցանկապատի ծրագծի որոշման համար անհրաժեշտ է ներկայացնել սեփականության վկայական կամ հողամասի գլխավոր հատակագիծ:***

ՀՀ մշակույթի նախարարությունն Ընկերությանը տեղեկացրել է, որ Էրեբունու պատմահնագիտական հուշարձանների նորոգման և վերականգնման խնդիրների բացահայտման ու կարգավորման համար ***ՀՀ մշակույթի նախարարությունը դեռևս 2014թ. Երևանի քաղաքապետարանի առաջարկել է ստեղծել մասնագիտական հանձնախումբ, ուստի Ընկերության կողմից ներկայացված հուշարձանի (պորտիկի) տեխնիկական վիճակի վերաբերյալ ակտը և նախագծային առաջարկը նախարարությունը կքննարկի վերոնշյալ հանձնախմբի եզրակացությունը տալուց հետո:***

Ընկերությունը 19.08.2015թ. N 08 գրությամբ Երևանի քաղաքապետարանին հայտնել է, որ Պատվիրատուն դեռևս թիվ 13/37299 գրությամբ հայտնել էր, որ անշարժ գույքի վկայականի պատրաստումն ընթացքի մեջ է, սակայն մինչ այժմ Ընկերությունը այն չի ստացել, ինչպես նաև չի ստացել հնավայր տանող ճանապարհի երկայնքով

էլեկտրական լուսավորություն իրականացնելու համար տեխնիկական պայմանները (15 կՎտ): Ընկերությունը խնդրել է հայտնել, թե երբ պատրաստ կլինեն համապատասխան փաստաթղթերը, քանի որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման վերջնաժամկետը 25.09.2015թ. և առանց համապատասխան փաստաթղթերի հնարավոր չէ սկսել և իրականացնել Պայմանագրով նախատեսված նախագծային առաջադրանքը: Ընդ որում նախագծային առաջադրանքում բացակայում է նաև նշված աշխատանքների կատարվելիք ծավալները, հաշվարկային հզորությունները (տարողու-նակությունները), ինչպես նաև աշխատանքների մեկնարկի համար, առաջին հերթին, գեոդեզիական հանույթի (մոտ 30 հա) կատարմանն անհրաժեշտ է անշարժ գույքի վկայականը, որում նշված կլինի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի սահմանները:

«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ և բանավոր և գրավոր եղանակով դիմել է Վարչությանը, սակայն որևէ պատասխան չի ստացվել: Այնուամենայնիվ Ընկերությունը 09.07.2015թ. N 04 գրությանը կից ներկայացրել է էսքիզ-նախագիծ և առաջարկել է կատարվելիք աշխատանքների հնարավոր հաշվարկային հզորությունները (տարողունակությունները), ծավալները, ինչպես նաև դրանից բխող պեղումների համար նախատեսվող մակերեսները: Ընդ որում ներկայացված էսքիզ նախագիծ-առաջարկը համատեղ չի քննարկվել և չի ներկայացվել ՀՀ մշակույթի նախարարություն՝ համատեղ քննարկման և հնավայրի հնագիտական դիագնոստիկ պեղումներ, երկրաբանական հետազոտություններ իրականացնելու թույլտվություն ստանալու համար: Մինչդեռ Երևանի քաղաքապետարանի կողմից Ընկերությանը ներկայացված գրությունների մեջ գնահատական է տրված Ընկերության կողմից ներկայացված էսքիզ-նախագծին՝ առանց համատեղ քննարկման, ինչպես նաև գրավոր ձևով ներկայացված չեն դիտողությունները և առաջարկները: Միևնույն ժամանակ թիվ 13/37299 գրության մեջ նշված է, որ անհրաժեշտ է ներկայացնել նախագծային առաջադրանքին համապատասխան նախագիծ-առաջարկ, որը հնարավորություն կտա իրականացնելու լրացուցիչ համատեղ քննարկումներ, այն դեպքում, երբ նախագծային առաջադրանքին համապատասխան նախագիծ-առաջարկը 09.07.2015թ. թիվ 04 գրությամբ Ընկերության կողմից արդեն իսկ ներկայացվել է:

Ընկերությունը հայտնել է նաև, որ համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանման և օգտագործման մասին» ՀՀ օրենքի՝ պեղումների և

երկրաբանական հետազոտությունների համար թույլտվությունը սահմանված կարգով տալիս է բնագավառի լիազորված մարմինը (ՀՀ մշակույթի նախարարությունը):

Ընկերությունը նաև նշել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված առաջադրանքը պետք է համաձայնեցված լիներ ՀՀ մշակույթի նախարարության հետ:

Ըստ Ընկերության՝ վերը նշված օրենքով սահմանված գործընթացի և նշված օբյեկտիվ խոչընդոտների պատճառով նախագծային-նախահաշվային փաստաթղթերը մեկնարկելը և ավարտուն տեսքի հասցնելը Պայմանագրով սահմանված ժամկետում և փորձաքննության արդյունքում եզրակացության տրամադրումը հեռանկարային չեն: Ուստի Ընկերությունը խնդրել է Պատվիրատուի միջամտությունը համապատասխան կառույցներում լիզորված մարմինների հետ համագործակցության եզրեր գտնելու և համապատասխան փաստաթղթերը ողջամիտ ժամկետում տրամադրելու գործում, որը հնարավորություն կտա սկսել և ավարտին հասցնել աշխատանքները, ինչպես նաև հաշվի առնելով ստեղծված իրավիճակը Պայմանագրով սահմանված վերջնաժամկետը երկարաձգել մինչև հոկտեմբերի 15-ը:

Ի պատասխան «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ի վերոհիշյալ գրության՝ Երևանի քաղաքապետարանը 08.09.2015թ. թիվ 13/44200Հ գրությամբ հայտնել է, որ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը չունի անշարժ գույքի պետական գրանցման վկայական, որի տրամադրումը նախատեսված չէ Պայմանագրով: Միաժամանակ Պայմանագրով նախատեսված գեոդեզիական հանույթի իրականացման նպատակով, տրամադրվում է Երևանի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման գոտիների նախագծի համապատասխան հատվածի լուսապատճենը, որում սահմանված է պահպանման գոտիների համակարգը:

Ինչ վերաբերում է հնավայր տանող ճանապարհի երկայնքով էլետրական լուսավորություն իրականացնելու տեխնիկական պայմաններին, ապա Պատվիրատուն հայտնել է, որ դրանք կարող են տրամադրվել ներկայացված 15 կվտ-ի հաշվարկ-հիմնավորումները ներկայացնելու պարագայում:

Պատվիրատուն նշել է, որ նախագծային առաջադրանքում նշված աշխատանքների բացակայող ծավալների հարցը կամ հրավերի պարզաբանումը անհրաժեշտ էր պահանջել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված ժամկետում: Միաժամանակ

հաշվարկային հզորությունները հնարավոր կլինի քննարկել պայմանագրի հավելված 1-ով սահմանված հնագիտական դիգնոստիկ պեղումներ և երկրաբանական հետազոտություններ իրականացնելու և արդյունքներն աշխատանքային կամ էսքիզային նախագծով ներկայացնելու պարագայում:

Ընկերության կողմից 09.07.2015թ. թիվ 04 գրությամբ ներկայացված էսքիզ-նախագծում բացակայում են նախատեսվող կառույցների էսքիզային տարբերակները, որի փոխարեն ներկայացված է թանգարանի մակերեսի ծրագիր պատկերը:

Պեղումների և երկրաբանական հետազոտությունների համար թույլտվությունը ստանալու նպատակով անհրաժեշտ է էսքիզային տարբերակով հիմնավորել և ներկայացնել նախատեսվող պեղումների իրականացման տարածքներն ու մակերեսը: Էսքիզ նախագծով ներկայացված պեղումների մակերեսներն անհրաժեշտ է առաջարկել ոչ թե կամայական սկզբունքով, այլ առաջնորդվելով ՀՀ կառավարության 20.04.2002թ. N 438 որոշմամբ ամրագրված դրույթներով:

Պատվիրատուն հայտնել է, նաև, որ նպատակահարմար չի գտնում երկարաձգել Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետը:

«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանին ուղղված 09.09.2015թ. թիվ 09 գրությամբ հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված նախագծային առաջադրանքը հնարավոր չէ ավարտին հասցնել օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով և դրա համար խոչընդոտ են հանդիսացել համագործակցության և հետևյալ փաստաթղթերի բացակայությունը.

- «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց թանգարանի անշարժ գույքի վկայական,
- նախատեսվող ամֆիթատրոնի, ուրարտական խոհանոցի, ավտոկայանատեղիի և այլ սպասարկման շինությունների տեղակայման համար նախագծվող շինությունների տարողունակությունները (հզորությունները) և գտնվելու վայրը պետք էր նախապես մինչև գնումներ կազմակերպելը, որոշված և համաձայնեցված լիներ ՀՀ մշակույթի նախարարության հետ և Ընկերությանը տրամադրվեր թույտվություն դիագնոստիկ պեղումներ, երկրաբանական հետազոտություններ իրականացնելու համար (համաձայն ՀՀ կառավարության 20.04.2002թ. N 438 որոշման).

- վերը նշված նախագծվող շինությունների համար անհրաժեշտ էր տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանքը, տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը, վերակառուցվող ճանապարհի արտաքին լուսավորության համար՝ տեխնիկական պայմանները, որոնց մասին Պայմանագրով սահմանված նախագծային առաջադրանքում (հավելված 1) նշված չէ, որ Ընկերությունը ինքը պետք է ձեռք բերի նշված փաստաթղթերը (համաձայն՝ ՀՀ կառավարության 21.12.1998թ. N 812 որոշման).
- պորտիկի վերականգնման համար անհրաժեշտ էր նախապես դրա նպատակը, անհրաժեշտությունը, բնույթը և ծավալը համաձայնեցնել ՀՀ մշակույթի նախարարության հետ և վերջինիս կողմից տրամադրվեր համապատասխան թույլտվություն (համաձայն՝ ՀՀ կառավարության 20.04.2002թ. N 438 որոշման 84-րդ կետի), որից հետո Ընկերությանը պետք է տրվեր համապատասխան պայմաններն ու դիտողությունները (համաձայն՝ ՀՀ կառավարության 20.04.2002թ. N 438 որոշման 85-րդ կետի):

Ի պատասխան Ընկերության վերոհիշյալ գրությանը՝ Երևանի քաղաքապետա-ռանը 19.09.2015թ. թիվ 61/47577h գրությամբ հայտնել է, որ Ընկերության և Պատվիրատուի միջև կնքված Պայմանագրով Ընկերությունը ստանձնել է համապատասխան պարտավորություններ, որոնք չկատարելու հիմքում դրված հանգամանքների և հարցադրումների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանը պատասխանել է 08.06.2015թ. թիվ 13/44200h գրությամբ:

Պատվիրատուն վկայակոչել է Պայմանագրի 1.1, 1.2, 7.3 կետերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածը:

Միևնույն ժամանակ Երևանի քաղաքապետարանը 23.10.2015թ. թիվ 13/888h գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանված է նույն թվականի սեպտեմբերի 15-ը, ուստի անհրաժեշտ է երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել (հանձնել) Պայմանագրով նախատեսված աշխատանքները, հակառակ դեպքում՝ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի կլուծարվի:

Երևանի քաղաքապետարանը 13.11.2015թ. թիվ 61/2857-1 գրությամբ ծանուցել է Ընկերությանը՝ հայտնելով, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը Պատվիրատուն միակողմանի լուծարում է Պայմանագիրը:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հուշարձանների հետախուզում և հնագիտական պեղումներ կատարելու թույլտվություն տալիս է լիազորված մարմինը՝ միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

ՀՀ կառավարության 20.04.2002թ. «**Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին»** N 438 որոշման 47-րդ կետը սահմանում է հուշարձանների հետազոտման հատուկ աշխատանքները (զոնդավորում, պեղումներ, ֆիզիկական հետազոտության նպատակով փորձանմուշների առանձնացում և այլն) կատարվում են լիազորված մարմնի թույլտվությամբ՝ համաձայն նույն կարգի IV բաժնի պահանջների:

Նույն որոշման 52-րդ կետի համաձայն՝ հուշարձանների հետախուզման և հնագիտական պեղումների թույլտվություն օրենքով սահմանված կարգով տալիս է լիազորված մարմինը՝ իրեն կից գործող միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

ՀՀ մշակույթի նախարարությունն, որպես **«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված** լիազոր մարմին, Ընկերությանն ուղղված 28.09.2015թ. թիվ 01/14-1/5048-15 գրությամբ հայտնել է, որ **«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի՝** Էրեբունի հնավայրի տարածքում գտնվող պորտիկի վերականգնման խնդրի, ինչպես նաև կառուցապատման համար նախատեսվող տարածքներում հնագիտական և երկրաբանական հետախուզման աշխատանքների թույլտություն տալու վերաբերյալ հայտնել է, որ նախարարությունում խնդիրների քննարկման համար անհրաժեշտ է ներկայացնել համալիր ծրագիր, որում պետք է հիմնավորվի նախատեսվող կառույցների նպատակն ու անհրաժեշտությունը, ինչպես նաև շինությունների և

ավտոկայանատեղիի հզորությունները, ընդ որում նախատեսվող օբյեկտների նախագծային առաջադրանքը պետք է լրացվի ՀՀ կառավարության կողմից հաստատված ձևաչափով, իսկ ցանկապատի ծրագծի որոշման համար անհրաժեշտ է ներկայացնել սեփականության վկայական հողամասի գլխավոր հատակագիծ:

ՀՀ մշակույթի նախարարությունը Ընկերությանը տեղեկացրել է, որ Էրեբունու պատմահնագիտական հուշարձանների նորոգման և վերականգնման խնդիրների բացահայտման ու կարգավորման համար ՀՀ մշակույթի նախարարությունը դեռևս 2014թ. Երևանի քաղաքապետարանի առաջարկել է ստեղծել մասնագիտական հանձնախումբ, ուստի Ընկերության կողմից ներկայացված հուշարձանի (պորտիկի) տեխնիկական վիճակի վերաբերյալ ակտը և նախագծային առաջարկը նախարարությունը կքննարկի վերոնշյալ հանձնախմբի եզրակացությունը տալուց հետո:

Հետևաբար համապատասխան թույտվությունը չէր կարող տրամադրվել տեղում, ինչպիսի դիրքորոշում հայտնել է Պատվիրատուն Ընկերությանը համապատասխան գրությամբ:

Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով Ընկերությունը պարտավորվել էր իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Իրականացնել Էրեբունի հնավայրի և նրան հարող անհրաժեշտ տարածքի (մոտ 30հա) գեոդեզիական հանույթ՝ 1:500 մասշտաբով,
- Հնավայրի տարածքում՝ ամֆիթատրոնի, ուրարտական խոհանոցի, ավտոկայանատեղիի, սպասարկման և այլ շինությունների տեղադրման վայրերում իրականացնել հնագիտական դիագնոստիկ պեղումներ (ընդհանուր հաշվով 2.3 հա),
- Նույն տարածքներում իրականացնել երկրաբանական հետազոտություններ,
- Հնավայրի տարածքի ամբողջ պարագծով (մոտ 1,7 կմ) իրականացնել ցանկապատի տեղադրում և երկու մուտքերի մոտ անցակետերի կառուցում,
- Նախագծային այս փուլում առաջին հերթին (առաջիկա 3 ամսում) իրականացնել տարածքի ցանկապատման և պորտիկի վերականգնման նախագծային աշխատանքներ: Իրականացնել վերջիններիս վերականգնման և շինարարական աշխատանքները 2015թ. ընթացքում,

• Հնավայր տանող ճանապարհի ռեկոնստրուկցիա, նրա երկայնքով էլ լուսավորության իրականացում մինչև ամֆիթատրոնի հարթակը, ինպես նաև արգելապատնեշի տեղադրում:

Հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հողամասի սահմաններն ամրագրվում են կադաստրային քարտեզներում, սեփականության, օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերում և արտացոլվում են տեղանքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Այսպիսով Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները սկսելու և իրականացնելու համար Ընկերությանն ի սկզբանե պետք է տրամադրվեր համապատասխան տարածքի, այն է՝ Երևան քաղաքի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տարածքում հնագիտական և երկրաբանական հետախուզման աշխատանքների իրականացման թույլտվությունը (որը համաձայն **«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի**՝ տրամադրվում է լիազոր մարմնի կողմից), ինչպես նաև սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը, որը հնարավորություն կտար նախապես որոշելու այն սահմաններն, որոնց շրջանակներում պետք է իրականացվեին համապատասխան աշխատանքները:

Մինդեռ, Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերությունը բազմիցս դիմել է Պատվիրատուին՝ առաջարկելով տրամադրել անհրաժեշտ փաստաթղթերն, որին ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը 24.07.2015թ. թիվ 13/37299 գրությամբ հայտնել

է, որ անշարժ գույքի վկայականի պատրաստումն ընթացքի մեջ է, իսկ 08.09.2015թ. թիվ 13/44200Հ գրությամբ հայտնել է, որ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը չունի անշարժ գույքի պետական գրանցման վկայական և դրա տրամադրումը նախատեսված չէ Պայմանագրով, մինչդեռ Պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրենց բնույթով ենթադրում են համապատասխան տարածքի անշարժ գույքի սեփականության վկայականի առկայություն՝ կառուցապատման ծրագիր որոշման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ***որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Տվյալ պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» եթակետով նախատեսված պայմանագրով սահմանված պարտավորության խախտում, քանի որ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում չկատարելը հանդիսացել է Պատվիրատուի կողմից համապատասխան փաստաթղթերը չտրամադրելու հետևանք, առանց որոնց Ընկերությունը օբյեկտիվ հնարավարություն չի ունեցել կատարելու Պայմանագրով ստանձնած պարտականությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2016թ. թիվ 1/73-1/2092-16 և 06.02.2017թ. թիվ 03/73-3/1639-17 գրություններով ներկայացված «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00857439) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ոսկանյան Լուսինե**

Անդամ՝ **Խաչատրյան Հայկ**